ՍԴ3/0057/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 հուլիսի 2025 թվական | ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴ3/0057/01/25 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 14-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի մարտի 24-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Գրիգոր Հայկի Սարգսյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև

ՀՀ քրեական օրենսգիրք) 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով, 182-րդ հոդվածի 1-ին մասով և 359-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 90951720 (ՍԴ3/0057/01/25) քրեական վարույթը:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ա.Ոսկանյան) 2025 թվականի մարտի 27-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0057/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հունիսի 26-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Ջ.Հայրապետյան) 2025 թվականի հուլիսի 14-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0057/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հուլիսի 16-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Գրիգոր Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով, 182-րդ հոդվածի 1-ին մասով և 359-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«(…) նա 2020 թվականի մայիս ամսին հանդիսանալով ՊԲ 35383 զորամասի Դ-20 ՀԴՆ-ի 2-րդ հրետանային մարտկոցի 2-րդ հրանոթի հրամանատար, պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով՝ կրտսեր սերժանտ, 2020 թվականի մայիսի 1-ից մինչև 14-ն ընդգրկված լինելով մարտական հերթապահության նույն զորամասի Դ-20 հրետանային դիվիզիոնի 2-րդ մարտկոցի 720 կրակային դիրքում, մարտական հերթապահություն կատարելու ժամանակ, նույն մարտկոցի ավագ սպա, կրակային դիրքի պատասխանատու, լեյտենանտ Հովհաննես Վրեժի Հակոբջանյանի հետ միասին՝ խմբով, ծեծի են ենթարկել իրենց*

նկատմամբ ստորադաս հանդիսացող ժամկետային զինծառայող, շարքային Սասուն Սուրենի Մարգարյանին, ինչի արդյունքում անզգուշությամբ վրա է հասել ծանր հետևանք, այն է՝ Սասուն Մարգարյանը գործել է ինքնասպանություն:

Այսպես.

ՊԲ 35383 զորամասի հրամանատարի 2020 թվականի ապրիլի 27-ի թիվ 0206 հրամանով նույն զորամասի Դ-20 ՀԴՆ 2-րդ մարտկոցի անձնակազմը՝ 2020 թվականի մայիսի 1-ից մինչև 14-ը, նշանակվել է մարտական հերթապահության Դ-20 հրետանային դիվիզիոնի 2-րդ մարտկոցի 720 կրակային դիրքում, իսկ մարտկոցի ավագ սպա Հովհաննես Հակոբջանյանը նշանակվել է կրակային դիրքի պատասխանատու:

Հովհաննես Հակոբջանյանը 2020 թվականի մայիսի 9-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, ծառայության կրելու վայրում՝ հիշյալ կրակային դիրքի կացարանի հարակից տարածքում, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ, այն է՝ պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սասուն Մարգարյանի կողմից դիտորդի պարտականությունները կատարելու ժամանակ բջջային հեռախոսը դիտակետ տանելու և այդ հանգամանքը խաբելու միջոցով թաքցնելու համար, խախտելով ՀՀ ՋՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ և 16-րդ հոդվածների և կարգապահական կանոնագրքի 4-րդ հոդվածի պահանջները՝ կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության հետ, ոչ պատշաճ պարզաբանումներ է կատարել շարքային Սասուն Մարգարյանի հետ, որի ընթացքում՝ կրտսեր սերժանտ Գրիգոր Սարգսյանի հետ խմբով, բռնություն են գործադրել՝ ծեծի են ենթարկել իրենց նկատմամբ ստորադաս հանդիսացող շարքային Սասուն Մարգարյանին՝ ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել նրա մարմնի տարբեր մասերին, ինչը նկատել են մարտկոցի զինծառայողները և միջամտելով՝ դադարեցրել են ծեծկոտուքը, որից հետո Հակոբ Հակոբջանյանը շարունակելով իր հակահրավական գործողությունները մարտկոցի ամբողջ անձնակազմի մոտ՝ առանց անուններ նշելու, սեռական բնույթի հայհոյանք է հնչեցրել իրեն խաբողի հասցեին:

Հաջորդ օրը, 2020 թվականի մայիսի 10-ին ժամը՝ 11:00-ից մինչև 12:00-ն ընկած ժամանակահատվածում, Գրիգոր Սարգսյանը՝ հանդիսանալով սպա Հովհաննես

Հակոբջանյանի հովանավորչության արդյունքում ստորաբաժանման մյուս զինծառայողների հանդեպ առավել ազդեցիկ դիրք զբաղեցնող և զինվորական ենթամշակույթի չգրված կանոններով հեղինակություն վայելող զինծառայող, կրակային դիրքի կացարանում Սասուն Մարգարյանի և նույն դիրքի դիտորդ, շարքային Ավագ Միրզախանյանի միջև կացարանի քնապտեղերը բաշխելու կարգի վերաբերյալ նախօրեին տեղի ունեցած տարաձայնության կապակցությամբ պարզաբանում է պահանջել շարքային Սասուն Մարգարյանից, ապա նրա խոսքերի իսկությունը ցուցադրաբար հերքելու նպատակով նույն հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ է պահանջել նաև Ավագ Միրզախանյանից, ինչի արդյունքում՝ լսելով վերջինիս, Սասուն Մարգարյանը բացահայտ խոստովանել է, որ թաքցրել է իրականությունը:

Նկարագրված իրողությունը փողոցային բարքերին համահունչ մեկնաբանելու նպատակով, Գրիգոր Սարգսյանն իր հերթին պահանջել է Սասուն Մարգարյանից ինքնուրույն գնահատականի արժանացնել այդ քայլը, որին ի պատասխան վերջինս ընդունել է, որ «խաբողն արժանի է սրբությանն ուղղված» հայհոյանքի: Շարունակելով իր հակահրավական և հակաբարոյական վարքագիծը, օգտագործելով ստեղծված առիթը, այն է՝ հասցեագրված հայհոյանքի բնույթը, նման հայհոյանքների դեպքում զինվորական ենթամշակույթում չգրված բարքերի համաձայն ծառայակիցների կողմից արհամարհական և մերժողական վերաբերմունքի հավանական դրսևորման հանգամանքը, շարքային Սասուն Մարգարյանի մասին արատավորող տեղեկությունը՝ «սրբությանն ուղղված» հայհոյանքն ընդունելը «ներելու» և հետագայում համածառայողների շրջանում անվանարկող տեղեկությունների տարածումը կանխելու՝ «թեման ջրելու համար», Գրիգոր Սարգսյանը շարքային Սասուն Մարգարյանից պահանջել է մարտական հերթապահության ավարտից հետո զորամաս վերադառնալուն պես իրեն տալ 20.000 ՀՀ դրամ գումար:

Արդյունքում, Գրիգոր Սարգսյանի և Հովհաննես Հակոբջանյանի կողմից կատարված հիշյալ գործողությունների հետևանքով՝ նկարագրված, միմյանց հաջորդող գործոնների համակցությամբ Սասուն Մարգարյանի մոտ ձևավորվել է ընկճված հոգեվիճակ և վերջինս կրակային դիրքում դիտորդի

պարտականությունները կատարելու ընթացքում իրեն ամրակցված ԱԿ-74 տեսակի ՍՄ 304498 համարի ինքնաձիգից ինքն իր կրծքավանդակի շրջանում 2020 թվականի մայիսի 10-ին, ժամը 17:55-ի սահմաններում հասցրել է հրազենային գնդակային վիրավորում և տեղում մահացել:

(…)

Բացի այդ, Գրիգոր Հայկի Սարգսյանը, 2020 թվականի մայիսի 9-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, նշված կրակային դիրքի կացարանի հարակից տարածքում, 2-րդ մարտկոցի 4-րդ հրանոթի հրամանատար, պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Բորիս Արմենի Խաչատրյանի կողմից նույն հրանոթի հաշվարկի համար, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Ներսես Սարգսի Իսկանյանին դիտորդի պարտականություններն իրականացնելիս բջջային հեռախոս պահելու թույլտվություն տալու կապակցությամբ վերջինիս հետ պարզաբանումներ կատարելու ընթացքում, խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները՝ ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ հոդվածների և ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագրքի 3-րդ հոդվածի պահանջները՝ կապված զինվորական հարգանքի, վարքի կարգուկանոնի և կարգապահության հետ, նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, ցանկանալով ընդգծել իր թվացյալ «հեղինակությունը» բռնի գործողություն է կատարել նրա նկատմամբ՝ մեկ անգամ ձեռքով հարվածել է կրտսեր սերժանտ Բորիս Խաչատրյանի գլխի ձախ հատվածին՝ պատճառելով ֆիզիկական ցավ: (…)»[1]*:*

7. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հունիսի 26-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը.

«(…) - Գրիգոր Հայկի Սարգսյանը թիվ 90951720 քրեական վարույթով իրեն մեղսագրվող ենթադրյալ հանցանքները կատարել է 2020 թվականի մայիս ամսին՝ թիվ ՊԲ 35383 զորամասի մարտական հենակետում, որը տեղակայված է եղել Արցախի Հանրապետությունում:

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 8, թերթեր 2-5:

- Թիվ 90951720 քրեական վարույթի նախաքննությունն իրականացրել է ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ հատկապես կարևոր գործերի քննության վարչությունը:

- Գրիգոր Հայկի Սարգսյանին մեղսագրվող ենթադրյալ հանցանքների կատարման վայրում մեղադրանքի քննությունը տվյալ տարածքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անհնարին է:

Դատարանը գտնում է, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը և Վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական գործով 2025 թվականի հունիսի 16-ին կայացրած որոշմամբ հայտնած դիրքորոշումը, համաձայն որի՝ թեև մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր է եղել պարզել մեղադրյալին վերագրվող ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, սակայն մեղադրանքի քննությունը տվյալ տարածքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անհնարին է, ապա մեղադրանքի քննությունը պետք է իրականացնի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

Սույն քրեական գործով մինչդատական վարույթն իրականացվել է ինչպես արդեն նշվեց ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Վերոգրյալը հիմք ընդունելով Դատարանն արձանագրում է, որ սույն քրեական վարույթն ընդդատյա չէ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, ուստի ընդդատության կանոնների պահպանմամբ այն պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (…)»[2]*:*

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն գործի փաստական հանգամանքներն համադրելով վկայակոչված նորմերի և*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 10, թերթեր 75-79:

իրավական դիրքորոշումների հետ Դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ա. ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մայիսի 13-ին կայացած դատական նիստում նախնական դատաքննությունների ժամանակ անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված վարույթի ընդդատության հարցին որոշում է կայացրել գործը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա լինելու մասին: Այս առումով հարկ է արձանագրել, որ այդ որոշումը կայացնելուց հետո վարույթի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով՝ բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, կամ 263-րդ հոդվածի 2-րդ մասով՝ նոր ի հայտ եկած փաստի ուժով:

Հետևաբար, ընդդատության մասին դատարանի կողմից 2025 թվականի մայիսի 13-ին որոշում կայացնելուց հետո 2025 թվականի հունիսի 26-ին կայացած դատական նիստում այդ հարցին վերստին անդրադառնալը վիճելի է:

բ. ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հունիսի 26-ին կայացած դատական նիստում գործն ըստ տարածքային ընդդատության ուղարկելու որոշման հիմքում դրել է զուտ թիվ ՍԴ3/0114/01/22 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի վարույթի ընդդատության հարցը լուծելու մասին՝ 2025 թվականի հունիսի 16-ի որոշման հիմնավորումների մի մասը:

Դատարանի կարծիքով վարույթի ընդդատության հարցը լուծելու մասին որոշումը լուծում է կոնկրետ փաստական հանգամանքներ ունեցող գործով երկու դատարանների միջև առկա ընդդատության մասին վեճը և չի կարող հիմք հանդիսանալ այլ փաստական հանգամանքներ ունեցող գործով ընդդատության հարցը լուծելու համար, առավելապես այն դեպքում, երբ գործով ընդդատության հարցն արդեն իսկ լուծված է և վարույթի ընդդատության հարցը լուծելու մասին Քրեական պալատի որոշումը ծառայեցվում է որպես «նոր հանգամանք» այդ հարցին վերստին անդրադառնալու համար:

գ. ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի վարույթի ընդդատության հարցը լուծելու մասին որոշման հիմնավորումները մեկնաբանել է միակողմանի: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատն այդ գործով վարույթի ընդդատությունը լուծելիս հաշվի է առել առնվազն չորս փաստական հանգամանքների համակցություն՝

1. անհնարինությունը

2. մասնավոր մասնակիցների բնակության վայրը

3. դատական շրջապտույտի վտանգը

4. ողջամիտ ժամկետի պահպանումը

Ընդ որում, որոշման մեջ ընդգծվել է հենց շրջապտույտի և գործի տևական քննության հիմնավորումները:

Դատարանն արձանագրում է, որ միայն այս չորս հանգամանքների համադրման և վերլուծության արդյունքում է Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հանգել այն եզրահանգման, որ վարույթը պետք է շարունակվի քննվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում: Մինչդեռ, սույն դեպքով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը վարույթի ընդդատությունը որոշել է զուտ այն հանգամանքից ելնելով, որ հանցանքը կատարվել է Լեռնային Ղարաբաղի տարածքում:

դ. ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դիրքորոշումը, ըստ որի՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում ենթադրաբար կատարված հանցանքների վարույթները, որով նախաքննությունն իրականացվել է Երևանի քննչական մարմնի կողմից ենթակա են քննության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից՝ որպես օրենքի հիման վրա ստեղծված դատարան վտանգում է նախկինում նմանատիպ հազարավոր գործերով կայացված, այդ թվում՝ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կայունությունը:

Ամփոփելով ամբողջ վերը նշվածը՝ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը սույն գործը ճիշտ ընդդատությամբ ստանալով և Վճռաբեկ դատարանի քրեական պալատի

մեջբերված ընդդատության վեճը լուծելու մասին որոշման հիմքով քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելով՝ ընդդատության որոշման կանոնի կապակցությամբ դրսևորել է ձևական մոտեցում և առանց նյութական ու դատավարական բավարար հիմքերի փոխանցել է գործն ըստ ընդդատության: (…)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0057/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 10, թերթեր 95-101:

նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Գ.Սարգսյանի վերաբերյալ թիվ 90951720 քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում[7]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ թեև մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր է եղել պարզել մեղադրյալին վերագրվող ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, սակայն մեղադրանքի քննությունը տվյալ տարածքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անհնարին է, գտել է, որ սույն քրեական վարույթը ՀՀ

[7] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 1-55:

քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը փաստել է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մայիսի 13-ին կայացած դատական նիստում՝ նախնական դատալսումների ընթացքում, անդրադառնալով սույն վարույթի ընդդատության հարցին, գտել է, որ վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Նման պայմաններում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ վերոնշյալից հետո վարույթի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով՝ բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, կամ 263-րդ հոդվածի 2-րդ մասով՝ նոր ի հայտ եկած փաստի ուժով:

Բացի այդ, ըստ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ վարույթի ընդդատության հարցը լուծելու մասին որոշման հիմնավորումները մեկնաբանել է միակողմանի[9]:

16. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ թեև մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր է եղել պարզել Գրիգոր Սարգսյանին վերագրվող ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, սակայն մեղադրանքի քննությունը տվյալ տարածքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անհնարին է: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն ընդունելի է համարում Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դատողությունը, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը

---

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Միաժամանակ, հաշվի առնելով վարույթին ներգրավված մեծաթիվ մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրերը, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթի քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում բխում է նաև արդարադատության շահից[10]:

17. Ինչ վերաբերում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությանը, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մայիսի 13-ին կայացած դատական նիստի ընթացքում վարույթի ընդդատության հարցը քննարկելիս ընդդատության կանոնների խախտում չի արձանագրել, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, հաշվի առնելով, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին որոշումն այնուամենայնիվ կայացրել է նախնական դատալսումների փուլում, գտնում է, որ վերոնշյալը չի կարող որոշիչ լինել սույն վարույթի ընդդատության հարցը լուծելիս:

18. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0057/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

---

[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 49-50:

19. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ՍԴ3/0057/01/25 վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Գրիգոր Հայկի Սարգսյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով, 182-րդ հոդվածի 1-ին մասով և 359-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ՍԴ3/0057/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ